

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB PL 72-10-09	Էջ 1/2
Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության պայմաններ		Խմբագրություն 2	
		Ուժի մեջ է՝ 07.10.2019թ.-ից	

#	Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության պայմաններ*	
1.	Կանխավճար	**Լիզինգի առարկայի արժեքի 20% Կանխավճարի/Լիզինգի գումար հարաբերակցությունը՝ 20/80%
2.	Ֆինանսավորման արժույթ	ՀՀ դրամ
3.	Ֆինանսավորման սահմանաչափ	Լիզինգի հիմնական գումարը չունի նվազագույն շեմ: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 450.0 մլն ՀՀ դրամը***
4.	Լիզինգի տոկոսադրույք	11% , որի մինչև 7 տոկոսային կետը սուբսիդավորվում է, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 4 տոկոս, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս
5.	Լիզինգի տոկոսադրույքի հաշվարկման կարգը	Լիզինգի հիմնական գումարի նվազող մնացորդի նկատմամբ
6.	Լիզինգի տրամադրման վճար	Լիզինգի գումարի 0,5-1%, առավելագույնը՝ 500,000 ՀՀ դրամ
7.	Ֆինանսավորման ժամկետ	1-ից մինչև 8 տարի
8.	Ժամանակացույցով սահմանված ժամկետից շուտ մայր գումարի վճարում	Տույժեր և տուգանքներ չեն գանձվում

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB PL 72-10-09	Էջ 2/2
Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության պայմաններ		Խմբագրություն 2	
		Ուժի մեջ է՝ 07.10.2019թ.-ից	

9.	Տույժ՝ Լիզինգի մայր գումարի և/կամ Տոկոսադրույքի մարման պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար****	Տույժ՝ ժամկետանց Լիզինգի և/կամ ժամկետանց Տոկոսագումարի 0.13% չափով կետանցի /պարտավորությունների կատարման համար սահմանված ժամկետների խախտման/ յուրաքանչյուր օրվա համար: Տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն:
10.	Լիզինգի գումարի և տոկոսագումարի մարումները	Ամսական՝ համաձայն մարումների ժամանակացույցի
11.	Մարման արտոնյալ ժամկետ	Լիզինգի հիմնական գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առավելագույնը 3 ամիս, իսկ լիզինգի չսուբսիդավորվող տոկոսների վճարման պարտականությունը լիզինգառուի մոտ առաջանում է լիզինգի տրամադրման պահից սկսած: Բացի այդ, լիզինգառուի դիմումով Բանկի կողմից կարող են սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով:
12.	Ապահովություն	<ul style="list-style-type: none"> • Լիզինգառուի տնօրենի և/կամ հիմնադրի և/կամ այլ անձի/ երաշխավորություն, • Գույքի/իրավունքի գրավ՝ ըստ պահանջի
13.	Ապահովագրություն	Պարտադիր յուրաքանչյուր տարի լիզինգի առարկան ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից, որը կատարվում է Բանկի կողմից
14.	Այլ պայմաններ	Մնացած պայմանները գործում են համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	12CIB PL 72-10-09	Էջ 3/2
Ազրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի պետական աջակցության պայմաններ		Խմբագրություն 2	
		Ուժի մեջ է՝ 07.10.2019թ.-ից	

	893-Լ որոշման և «Ամերիաբանկ» ՓԲԸ Ֆինանսական վարձակալության /լիզինգի/ պայմանների:
--	--

* Սույն պայմանները կիրառելի չեն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի շրջանակում տրամադրվող լիզինգի դեպքում.

** Լիզինգի առարկայի արժեքը ներառում է լիզինգի առարկայի ձեռքբերման գինը, լիզինգի առարկայի Հայաստանի Հանրապետություն ներմուծման հետ կապված ծախսերը (տեղափոխում, այդ թվում՝ տեղափոխման հետ կապված այլ ծախսեր, մաքսագերծում, ավելացված արժեքի հարկ և այլն).

*** Այն դեպքում, երբ կառուցվածքը (կոնստրուկցիան) կազմում է լիզինգով ձեռք բերվող տեխնոլոգիական սարքավորման անբաժանելի մաս, ապա կառուցվածքը կարող է դիտարկվել որպես լիզինգի առարկա.

**** Տուժանքի (տույժի և/կամ տուգանքի) փաստացի կիրառման դեպքում Տուժանքի տարեկան դրույքաչափը և/կամ Տուժանքների հանրագումարի չափը գործում է ՀՀ օրենսդրությամբ նշված թույլատրելի առավելագույն չափերի սահմաններում: